



ՀՊԳԵՒՈՐ ԱՄԱԿԹԵՐԹ ԱՄԵՆՈՒՆ ԿԱՄԱՐ
 PANPÈRE REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

RÉDACTION;

M. M. les Pasteurs GHAZAROSSIAN, BOUDAKIAN et M. MISSIRIAN

Administration: 7, Rue Papère, Marseille

22^e Année.—Novembre-Décembre 1946, N° 11-12 ԻՐ ՏԱՐԻ. ՆՈՅԵՄԲԵ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 1946. ԹԻՒ 11-12

Տարեկան բաժանորդագրութիւն.— Ֆրանսա՝ 50 ֆր.

Արտասահման՝ Մէկ Ամերիկեան Զոլար

Ծ Ն Ո Ւ Ն Դ Ե

Խորհրդ մեծ և սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ.
 Հովիւք երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի,
 Ծնաւ Նոր Արքայ ի Բեթլեհէմ քաղաքի,
 Որդիք մարդկան օրհնեցէք, զի, վասն մեր մարմնացաւ:
 Անբաւելին երկնի և երկրի ի խանձարուրս պատեցաւ.
 Որ մեկնելով 'ի Հօրէ, ի սուրբ այրին բաղմեցաւ:
 Այսօր ցնձան երկինք ի վերուստ մեծապալծառ աւետօք,
 Եւ արարածք ամենայն զգեցան Հանդերձ փրկութեան:

ԽՐԲԱԳՐԱԿԱՆ

ԾՆՆԴԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Աստուած՝ այնպէս սիրեց աշխարհը
մինչեւ իր միածին Որդին տուաւ:
Յովհ. 9. 16.

Տարուան ամենէն քաղցր եւ երկնային օրը կը նկատուի Ծննդեան օրը եւ իրաւածք: Բեթլեհէմի մասըը՝ պատճառ է այդ ուրախութեան: Հոն՝ այն կէտն է, ուր երկինք եւ երկիր իրարու հանդիպած են: Հոն՝ երկինքներուն Աստուածը, իր սրբութեամբն ու ահաւոր արդարութեամբը դէմ դիմաց կը կենայ մեղաւոր, ապատու, պարտապաշտ մարդկութեան, որ ամօթն երեսին, յանցապարտ, Աստուծոյ միջոխուստիօղ եղած է: Աստուած անոր առջեւ իր սիրտը կը բանայ, փոխան դատաւարութեան եւ պատիժի: Աւարդկութիւնը, գերմարդկային այդ ժէստին առջեւ շվորած, ափ ի բերան կը նշմարէ ոչ թէ Աստուծոյ սիրոյ պարզ սիրտայայտութիւնը կամ միայն սիրոյ մի պատգամը, հապա նոյն իսկ զինքը: Աստուած մարդացած եւ յայտնուած անկարող մահնան մը երեւոյթով:

Այս կը նշանակէր թէ Աստուած տեսնելով մարդուն մէջ այդ ապիկարութիւնն ու մեղքէն լուացուելու եւ անկէ ազատուելով՝ Աստուծոյ հասցիի բլլալու համար անկարողութիւնը, ինքը անձամբ կը ներէր անոր եւ կ'առաջարկէր անոր հետ հաշտուիլ եւ հաշտութեան սեղանին վրայ կը մատուցանէր ինքզինքը եւ ուխտը կը հաստատէր իր անձովը ու անձին վրայ: Այս բայը մեղաւոր մարդկութեան կողմէ ըմբռնել անկարելի էր, մեծ անակնկալ մը, ահաւոր իրականութիւն մը: Այո, Բեթլեհէմի մասըը ահաւոր իրականութիւն մըն է: Սակայն ահաւոր բլլալով հանդերձ, այն ատենուան սուրբերը, որոնց անծանօթ չէր խոստումը, տեսան, ուրախացան ու Աստուծոյ փառք տուին:

Քրիստոս երեսուն երեք տարի ապրեցաւ աշխարհի վրայ. բայց Անոր մարդեղութիւնը տեւական է: Անիկանոյն մարմնով փառաւորապէս յարութիւն առաւ, համբարձաւ ու վերը Աստուծոյ ամօռին՝ աչ կողմը նստած մեզի համար բարեխօսութիւն կ'ընէ: Ցիստու Քրիստոս Մարդը:

Այս է ծննդեան նշանակութիւնը, որ իր հետեւանքներով օրհնեալ, փրկարար, մխիթարիչ իրականութիւն մըն է:

Աւմենք Ծննդեան այս իրականութեան առջեւ ամէն պատճառ ունինք Աստուծոյ փառք տալու, մեր հաշտութեան, մեր փրկութեան երաշ-

խիքը Քրիստոսի մէջ ունենալով: Հիմա կրնանք Անոր դէմքին եւ աչքերուն նայիլ, որպէս հաշտութեան, որպէս իր փրկածները: Այս երաշխիքը յիշաւի մեծ գանձ մըն է եւ ուրախութեան պատճառ մը:

Այս ուրախութեան գործնական կողմերը հետեւեալներն են:

Ընդունիլ Աստուծոյ կողմէ մատուցուած այս ջօնը: Այս քայլը բոլորովին բնական եւ նոյնիսկ նախնական երախտագիտական զգացումի արտայայտութիւնն է հանդէպ բարեբարին: Ասկէ աւելին կայ: Զայն ընդունիլ, մեր օգտին եւ փրկութեան ու բարձրագոյն երջանկութեան համար:

Այդ աստուածային մատուցուած պարգեւը անտեսել, յետաձգել, մերժել, յիշաւի ամենէն մեծ ապերախութիւնը, յիմարութիւնը պիտի ըլլար: Պահ մը մտածենք մեր մէկ սովորութեան վրայ: Երեք ծննդեան առթիւ մեր սիրելիներուն նուէրներ կուտանք, ի յիշատակ Աստուծոյ մեզի ըրած ջօնին: Սակայն եթէ մենք Անոր ձօնը կը մերժենք, շիտա՞կ է Անոր օրինակին համաձայն կադանդել մեր սիրելիները:

Իսկ եթէ մեր սիրելիներէն մին, մեր սիրոյն արտայայտութիւնը եղող այդ նուէրը չընդունի, կամ նկատի իսկ չառնէ, չպիտի՞ ցաւինք եւ ինքզինքնիս նոյնիսկ արհամարհուած զգանք: Զէ՞ք խորհիր թէ, երկինքի մէջ ծննդեան տօներու առթիւ յաճախ եւ թերեւս մեզի համար՝ հրեշտակներ կը տրտմին, ինչպէս կ'ուրախանան մէկ հոգիի փրկութեան համար:

Ուրախութեան երկրորդ գործնական կէտը աւետելն է: Հովիւները հաւատացին հրեշտակին ըսածներուն, գացին, գտան մանուկը, ուրախացան եւ փառաբանեցին զԱստուած, բայց նաեւ պատմեցին ուրիշներուն այդ «ուրախութեան մեծ աւետիսը»: Ծննդեան առթիւ ինչ է մեր խօսակցութեանք նիւթը: Աւետիլ, խմել, հագուստը, ընդունելութիւնը, այցելութիւնը, թէ Աստուծոյ ձրի շնորհքը. որ մեզի ամենուս մատչելի եղաւ ու մեր բաժինը: Չտարուինք երեւութական անցաւոր բաներով, ճշմարիտը, յաւիտենականը փնտռենք եւ անոր արժէք տանք:

Ծնունդ է: Տօն կատարենք: Երբ փրկին ծննդեան տօնը, Անով մեր փրկութեան եւ աշխարհի փրկութեան կարելիութեան տօնը: Ան որ Անոր հաւատայ, յաւիտենական կեանք պիտի ունենայ:

Ուրախանանք եւ այդ ուրախութեան պատճառն ալ աւետենք ուրիշներու: Այն ատեն Ծննդեան օրը մեզի համար երկնայինի կը փոխուի:

Յ. Ն. Ղ.

Հոգեւոր կեանք

« ՈՎ ՈՁԻՆՉ ԲԱՆՈՎ ՈՒՐԱԽԱՅՈՂՆԵՐ »

(Ամովս. 2. 13)

Աստուած այս խօսքը մարգարէին բերնով կ'ուղղէ Իւր ժողովուրդին Իսրայէլի առաջնորդներուն որոնք Սիօնի մէջ հանգիստ կը բնակէին, ու Սամարիայի լեռանը վրայ ապահովութեամբ կը նստէին, փոսկրիայ մահիճներու մէջ կը պառկէին, պարարտ որթերը կ'ուտէին. Դաւիթի պէս իրենց երաժշտական գործիքներ կը հնարէին, ծանրագին իւղերով կ'օծուէին. բայց Յովսէփի (ազգին) բեկումին վրայ չէին ցաւեր: (կարգաւ Ամովս. 2. 1-16)

Աշխարհ կրնայ ուրախանալ ոչինչ բաներով քանզի ան ճշմարիտ, յաւիտենական բաները չճանչնար: »Աշխարհի մարդոց բաժինը այս կեանքին մէջ է. (Մաղ. ԺԷ 14): Ղուկ. ԺԲ 16-21ի հարուստ մարդը իր անձին ըսաւ. — «Ով անձս, շատ բարիքներ ունիս շատ տարիներու համար ժողովուած. հանգչէ. կեր, խմէ և ուրախ եղիր». բայց Աստուած ըսաւ անոր, անմիտ: Առանց Աստուծոյ և առանց Քրիստոսի ապրուած կեանքը արդէն ունայնութիւն, յիմարութիւն, ոչինչ և ոչինչէ ալ պակաս է, և այս իմաստով՝ «Ինչպէս է փուշերուն ձայնը կաթսային տակ, յիմարներուն ծիծաղն ալ այնպէս է»: (Ժող. Է. 6)

Աշխարհի ոչինչ ուրախութիւնը փուշերու կրակին նման պիտի մարի:

Մեր վերնագրին խօսքերը ուրեմն ուղղուած պիտի սեպենք Աստուծոյ ժողովուրդին, և նոյն իսկ անոնց մէջ աւելի ընտիր ճանչցուածներուն: Կրնանք առնել այս խօսքերը ընդհանրապէս բոլոր անոնց ուղղուած, որոնք քիչով կամ շատով հոգեւոր լոյս ստացած են, երկնաւոր բարիքներուն համը առած են՝ բայց չիտակ ճամբայէն, իրենց կոչումէն շեղելով՝ ոչինչ բաներով կ'ուրախանան:

Ինչպիսի ոչնչութիւնով ուրախացաւ մեր նախամայրը Եւա երբ արգիլուած ծառն ու անոր պտուղը հաճելի, փափաքելի գտնելով՝ Աստուծոյ պատուէրը ոտնակոխ ըրաւ:

Մի՞նչ ոչնչութիւնով ուրախացաւ Ղովտ երբ Սոդոմ իրեն բնակարան ընտրեց՝ յուսալով այն խոտաւէտ դաշտերուն մէջ իր հօտերը բազմապատկել:

Աբրահամ իսկ ոչինչ բանով ուրախացաւ երբ խոստման որդւոյն տեղ Իսմայէլ ծնաւ իր

տան մէջ: Իսմայէլ նախահայրն է մահմետականութեան՝ որ Քրիստոնեայ Եկեղեցւոյն դէմ ամենամեծ արգելքն է:

Եսաւ սուպէ ապուրին առջեւ, Բաղամա Բաղակի ընծաներուն առջեւ, Աբար նզովուա ոսկիին առջեւ, Գէեգի Նէեմանի արծաթին առջեւ անտի, ոչինչ բաներով ուրախացան որոնց յաջորդեց զառն տրամութիւն:

Դաւիթիայի ծունկերուն վրայ քնացող ուխտի գաւակ երիտասարդ Սամփսոնի ուրախութիւնը որք'ան ոչինչ բան էր:

Մարգարէ մը կար որ զգմենիի մը համար ուրախութիւնով ուրախացաւ. մինչդեռ խիստ դժուարացած և նեղացած էր երբ Աստուած 120,000 էն աւելի մարդոց խնայած էր:

Ով ոչինչ բանով ուրախացողներ:

Հաւատացեալներ որոնք հոգեւորէն աւելի մարմնաւոր բաներով կ'ուրախանան:

Հաւատացեալներ որոնք վայտ, խոտ, եղէգ չլինելով կ'ուրախանան:

Հաւատացեալներ որոնք առանց Սիրոյ հոգեւոր պարգեւներով կ'ուրախանան:

Երբ հոգի մը կէս-ապաշխարութիւնով, սըրտի կարծրութիւն պահելով, և փոխանակ զղման արցունքներ թափելու զգացական ուրախութիւնով կ'ապաշխարէ՝ անոր հարեւանցի դարձին համար երկինքի մէջ հրեշտակները չեն ուրախանար. բայց ոչինչ բանով ուրախանալու վարժուող, հովը ծեծելով բռնամարտութիւն ընող անստուգութեամբ վազող — հոգեւորներ կ'ուրախանան: Բայց վերջը ինչ մեծ տրամութիւնով կը տրամին երբ այդ հոգիին մէջ 7 դեւեր հտ կը մտնեն:

Ուրախանալ լաւ է, բայց երբ ուրախանալու ճշմարիտ պատճառ չկայ, աւելի լաւ է Աստուծոյ ուղածին պէս տրամիլ, քան թէ ոչինչով ուրախանալ:

Կորնթացւոց Եկեղեցին հպարտացեր էր հակառակ կարգ մը մեղքերու որոնց համար մահանալու սուգ ընելու էին: Պօղոս առաքեալ անոնց յանդիմանական թուղթ մը գրեց և զանոնք տրամեցաւ. ասկէ յետոյ նա կը գրէ. «Ուրախ եմ, . . . քանզի ահա այս բանը որ դուք Աստուծոյ ուղածին պէս տրամեցաք, ձեր մէջ որչափ ջանք գործեց, որչափ չքմեղութիւն, որչափ սրտմտութիւն, որչափ վախ, որչափ բաղձանք, որչափ նախանձաւորութիւն». (Ա. Կոր. Դ. 2 Բ. Կոր. Է. 7-11)

Մեր օրերուն հաստատեցեալներու անհատական, ընտանեկան և եկեղեցական կեանքին մէջ ուրախութեանց պատճառներուն մեծ մասը ոչինչ բաներ են: Նոյնիսկ բաներ որոնց համար ապագային, մեծ տրամաթիւններով պիտի տրամփինք:

Ո՛վ իրենց վրանները Սոգոմի քով բացողներ, Ո՛վ Իսմայէլներու ծնունդներով ուրախացողներ,

Ո՛վ զգեցնիքներու համար ուրախացողներ, Ո՛վ փայտ, խոտ, եղէգ շինելով ուրախացողներ,

Ո՛վ ոչինչ բանով ուրախացողներ. Արթնցէք ու ողբացէք, ծոմապահութեամբ լալով ու սղալով: Տէրոջը պաշտօնը կատարող քահանաները, սրահին ու սեղանին մէջտեղ թող լան:

Հիմա ժամանակ է մեզի քունէ արթննալու

Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ՀԱՒԱՏՔԻՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԷՁ

1. Մարտին եւ տըին— թերի ուսմունքի հետեւանքով տգիտութիւնը արգելք չէ հաւատալու: Բարձր դաստիարակութիւն ընդունող մըն ալ չհաւատալու պատճառ չունի: Վասնզի Աստուած աշխարհիս յիմարները ընտրեց. իսկ գիտուն ըլլալու մէջ՝ իմաստութեան սկիզբը Աստուծոյ վախն է: Բայց հաւատալու իրական արգելքները մարմինն ու արիւնն են:

Յովհ. Գ. 6 Մարմինէն ծնածը մարմինն է: Յովհ. Ը. 47 Դուք անոր համար մտիկ չէք ըներ որ Աստուծմէ չէք:

Յովհ. Ժ. 26 Դուք չէք հաւատար, վասնզի Իմ ոչխարներէս չէք:

2. Մեղքին Սէրը եւ ճշմարտութեան դէմ հակառակութիւն:

Հաւատալ զժուար չէ, քանի որ Աստուած ամէն Իրմէ խնդրողին հաւատք կուտայ. բայց մարդիկ կը նախընտրեն իրենց մեղքերը չձգել, ճշմարտութիւնը զիրենք կը նեղէ: Ծշմարտութիւնը իրենց զործին չգար:

Յովհ. Գ. 20 Ամէն ով որ Հար կը գործէ, անիկա չոյսը կ'ատէ:

Յովհ. Գ. 19 Մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին:

Յովհ. Ե. 42. Գիտեմ ձեզ որ Աստուծոյ սէրը ձեր մէջ չունիք:

Յովհ. Է. 7 Աշխարհ զիս կ'ատէ, վասնզի ես անոր վրայով կը վկայեմ թէ իր գործերը Հար են:

Յովհ. Ը. 43 Որովհետեւ ես ճշմարտութիւն կը խօսիմ, ինծի չէք հաւատար:

3. Ապտումը կամքը (հալ սրտութիւն, անիմա-զանդութիւն կամակորուծիւն)

Յովհ. Ե. 40 Դուք չէք ուզիր ինծի գալ որ կեանք ունենաք:

Յովհ. Ե. 44 Դուք ի՞նչպէս կրնաք հաւատալ, որ իրարմէ փառք կ'առնէք:

Հուկ ԺԳ 14 Ով Երուսաղէմ . . . քանի անգամ քու տղաքներդ ժողովել ուղեցի և դուք չուղեցիք: Մատթ. ԻԲ 3 Իր ծառաները զրկեց որպէսզի կանչեն հարսնիքի հրաւիրուածները, և անոնք չուղեցին գալ: (համար 45) Նորէն ուրիշ ծառաներ զրկեց . . . բայց անոք անհոգութիւն ընելով գացին:

4. Անհաւատութիւնը յաճախ կեղծ հաւատքի եւկեղծ կրօնասիրութեան դիմակը կ'առնէ:

Կոյր.— Յովհ. ԺԲ. 35 Խաւարի մէջ քալողը չգիտեր թէ ուր կ'երթայ:

Խուլ.— Յովհ. Ե. 37 Դուք բնաւ Անոր (Հօրը) ձայնը չլսեցիք:

Գերի.— Յովհ. Ը. 34 Ամէն ով որ մեղք կը գործէ, անիկա մեղքի ծառայ է:

Սուտ.— Յովհ. Ը. 54-55 Կ'ըսէք թէ (Հայրը) ձեր Աստուածն է. և զԱնիկա չէք ճանչնար. 5.44. Դուք ձեր հօրմէն Սատանայէ էք. անիկա ստախօս է:

Կեղծ.— Յովհ. Ը. 6 Զայս Կ'ըսէին զանիկա փորձելով:

Գող.— Յովհ. ԺԲ. 6 Ոչ թէ աղքատներուն համար իր հոգն էր. հապա որ գող էր:

Մատնիչ.— Յովհ. ԺԳ. 21 Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ:

5. Անհաւատութիւնը ինչպէս կր սկսի եւ ինչպէս կը յառաջանայ:

Յիսուսը մերժելով Յովհ. Ա. 11 Իրեններուն եկաւ և զինք չընդունեցին:

Յովհ. Գ. 11 Մեր վկայութիւնը չէք ընդունիր:

Յովհ. Ե. 43 Ես իմ հօրս անունովը եկայ, ու զիս չէք ընդունիր:

Յովհ. Ը. 37 Իմ խօսքս ձեր ներսիդին տեղ չունի:

Յիսուսէ հեռանալով Յովհ. Զ. 67 Շատերը ետ գացին, և ալ իրեն հետ չէին պատեր:

Յիսուսը ատելով. Յովհ. Է. 7 Աշխարհ զիս կ'ատէ:

Յովհ. ԺԵ. 24-25 Ատեցին զիս ալ իմ հայրս ալ. . . զուր տեղը զիս ատեցին:

ՓՈԽԱՆ ԱՌԱԿԻ



Յիսուսը սպաննելով— Յովհ. Ե. 18 Ալ աւելի կը փնտռէին հրէաները զԱնիկա սպաննել:

Յովհ. Ը 59, Քարհր վերցուցին որպէսզի Անոր վրայ նետեն:

Յովհ. Ժ. 31 Նորէն քարեր վերցուցին, որպէսզի զԱնիկա քարկոծեն:

Յովհ. ԺԱ. 53 Ալ այն օրէն ետեւ խորհուրդ ըրին որ սպաննեն զԱնիկա:

Յովհ. ԺԹ. 17-18. Գողգոթա ըստւած տեղը. . զԱնիկա խաչը հանեցին:

6. Անհաւատութեան վտանգը ամենուն կրնայ ըլլալ:

Աշխարհ.— Յովհ. Ա. 10 Աշխարհ (մարդիկ) զԱնիկա չճանչցաւ:

Յովհ. Գ. 19 Մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին:

Յովհ. Է. 7. Աշխարհ զիս կ'ատէ:

Յիսուսի ազգակիցները.— Յովհ. Ա 11 Իրեններուն եկաւ և Իրենները զինք չընդունեցին:

Յովհ. Դ 44. Մարգարէ մը իր Գաւառին մէջ պատիւ չունենար:

Յովհ. Է. 48. Իշխաններէն կամ փարիսեցիներէն մէկը հաւատա՞յ անոր:

Յովհ. Ը. 37. Աբրահամի սերունդ էք, բայց կը փնտռէք զիս մեղցնել:

Յովհ. Թ 39. Յիսուս ըսաւ, ես դատաստանի համար եկայ այս աշխարհը, որպէսզի չտեսնողները տեսնեն և տեսնողները կ'ուրանան:

Նոյնիսկ իր ընտանեաց անդամները.—

Յովհ. Է 5 Իր եղբայրներն ալ չէին հաւատար իրեն:

Մարկ. Գ 21. Իրենները.. ելան որ զինք բռնեն, քանզի կ'ըսէին թէ խելըռած է:

Եւ իր աշակերտները.—

Յովհ. Զ 64. Աշակերտներէն շատերը.. ըսին, խիստ է այդ խօսքը, ո՞վ կրնայ ատոր մտիկ ընել:

Յովհ. Զ 67 Իր աշակերտներէն շատերը ետ գացին:

Յովհ. Զ 71 Ես ձեզ տասուերկուքդ չընտրեցի, ու ձեզմէ ալ մէկը Սատանայ է:

Յովհ. Ի, 25. (Թովմաս) ըսաւ. . . եթէ. . . իմ ձեռքս անոր կողք չխոթեմ, չեմ հաւատար:

Յիսուս ըսաւ Թովմասի

—Մի ըլլար անհաւատ, հապա հաւատացեալ:—



ցեմ կրնար մոռնալ՝ բայց պիտի չյիշեմ

Հոյեւոր եղբայր մը ուրիշ հոգեւոր եղբօր մը հետ խնդիրներ ունէր, մանաւանդ անցեալի խնդիրներ, որոնք ժամանակի ընթացքին խոստովանուած, և իբր թէ ներուած ու լմնցած էին: Այս եղբայրները յաճախ իրարու հետ կը խօսակցէին, մանաւանդ կը վիճաբանէին և նոյնիսկ պզտիկ կամ մեծ վէճեր ալ կ'ունենային, թէեւ գրեթէ ամէն անգամին ալ միասին ազօթելով կը վերջացնէին իրենց վէճերը: Բայց առաջին առթիւ որ փոքր պատճառ մը ներկայանար, վիճաբանութիւններն ու վէճերը կը վերսկսէին, մանաւանդ անցեալին մէջ անիրաւութիւն կրող եղբայրը չէր կրնար մոռնալ իր կրած անիրաւութիւնները, ու թէեւ չուզէիւ, բայց զրգուրթեան ու բարկութեան մէջ գանոնք նորէն մէջ կը բերէր:

Օր մը երբորդ եղբօր մը ներկայութեան անոնք կրկին վէճի բռնուած՝ անցեալի խնդիրները մէջտեղ կը թափէին, ունկնդիր եղբայրը միջամտելով ըսաւ.— «Եղբայրներ, անցեալի բաները մի յիշէք:»

«Ի՞նչպէս մոռնամ եղբայր» պատասխանեց ան, որ անցեալին մէջ անիրաւութիւն կրած էր «Ինչպէս մոռնամ, ձեռքս չէ. Աստուած պէտք էր ուղեղս փոխէր և նոր ուղեղ մը տար ինձ, որպէսզի այս բաները միտքս չզային. եթէ ըսեմ թէ մոռցայ, կեղծաւորութիւն ըրած կ'ըլլամ:»

«Հոգ չէ թէ չկարենաս մոռնալ» ըսաւ, խաղաղութիւն ընող եղբայրը.— «Բայց կրնաս զանոնք ալ ընաւ չյիշել, և այսպէսով, սիրելի դաւակի մը պէս Աստուծոյ, քու հօրդ նմանող պիտի ըլլաս, քանզի Ան կ'ըսէ մեր յանցանքներուն համար, «ալ պիտի չյիշեմ»: Երբ. Ը 12 Ժ 17. Երեմ. ԼԱ 34. Եսայ. ԽԳ 25) Աստուած թէեւ չըսերթէ պիտի մոռնամ, բայց կ'ըսէ թէ պիտի չնշեմ ու մէջ մըն ալ պիտի չյիշեմ»:

Ընթերցող, «գնա դուն ալ այնպէս ըրէ»:



ԱՍՏՈՒԱԾ ՔԵՉ ՈՒՐ ԿԸ ՏԵՍԷ

Եթէ մէկը Բրիտանիոյ մէջ է,
անիկա նոր ստեղծուած մըն է:
Բ. Կորնթ. 5. 17

Մատթ. 18 11-ին մէջ մեր Տէրը կ'ըսէ «Որդին մարդոյ եկաւ կորսուածը փրկելու» Տէր Յիսուս այս յայտարարութենէն աշխատէ կը հասկցուի որպէս թէ միայն մէկ անձ մը ըլլար այդ կորսուածը: Որո՞ւ կ'ակնարկէ արդեօք: Եթէ մարդոց հարցնենք այս տեսակ հարցում մը. Օրինակաւը պիտի ըսէ «Անօրէնը», բարոյականը պիտի ըսէ «Անարարոյականը», Կրօնասէրը պիտի ըսէ «Անկրօնը», Աստուծոյ հաւատացողը պիտի ըսէ «Անհաւատը» է կորսուածը:

Եթէ այս պատասխանները շիտակ են, ինչպէս կ'ըլլայ որ Տէր Յիսուս Աստուծոյ հաւատացող բարեպաշտ օրէնքի վարդապետ, կրօնքի ուսուցիչ մէկու մը՝ Նիկողիմոսին կ'ըսէ, թէ որ մարդ մը նորէն չի ծնանի, չի կրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել «Յովհ. 3.3.5 և դարձեալ անոր դարմանքին վրայ կ'ըսէ անոր մեր Տէրը. «Մարմինէն ծնածը մարմին է և հոգիէն ծնածը հոգի է: Դու մի գարմանար որ քեզի ըսի, պէտք է ձեզի նորէն ծնանիլ, Յովհ. 7. 6-7:

Որեմն առանց բացառութեան բարոյականը և Անարարականը, Օրէնք ունեցողը և Անօրէնը, Կրօնասէրը և Անկրօնը, Աստուծոյ Գոյութեան հաւատացողը և Անհաւատը, ամէնքն ալ «Մարմինէն» (այսինքն Աղամէն ծնած ըլլալով) հաւատարապէս կորսուած են և մինչեւ որ «Հոգիէն» չի ծնանի «նորէն չի ծնանի» չեն կրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել:

Նոր ծնունդը անհրաժեշտ պայման է լաւ տեսական կեանքի, երկինք երթալու, Աստուծոյ փառքը մտնելու:

Նիկողիմոս Աստուծոյ հաւատացող մէկ մըն էր և կրօնքի ուսուցիչ մը և կրօնասէր վարդապետ մը, բայց նորէն ծնած մէկը չէր և ուստի պէտք էր իրեն նորէն ծնանիլ Աստուծոյ թագաւորութիւնը մտնելու համար: Կոռնելիոս բարեպաշտ աստուածապաի ծոմապահութեամբ աղօթող եւ շատ ողորմութիւններ ընող մէկն էր. Գործ. 10.1-3 սակայն փրկուած մէկը չէր, նորէն ծնած չէր. պէտք էր նորէն ծնանիլ Աստուծոյ թագաւորութիւնը մտնելու համար: Եթովպացիներ քինին Գործ. 8, 2, 28 մեծ զոհողութիւններով Երուսաղէմ կենդանի Աստուծոյն տաճարը երկրպա-

գութեան համար եկած էր այդչափ հեռու տեղէն եւ Ս. Գիրքը կը կարդար բայց նորէն ծնած մէկը չէր: Լիդիա բնակավայրէն կինը բարեպաշտ եւ աղօթատէր մէկը որ իր դործը ձգելով աղօթախոյովի դացող մէկն էր. բայց նորէն ծնած մէկը չէր: Եթէ այս տեսակ անձինք կորսուած ըլլալով փրկութեան աշխարհ նորէն ծնանելու հարօտ էին, որեմն կ'սկսած չկայ որ բոլոր մարդիկ կորսուած են եւ փրկութեան կը կարօտին եւ առանց նորէն ծնանելու մէկը չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել. Ս. Գրքի այս վարդապետութիւնը այնքան ճշմարիտ եւ անսուտ է որքան Աստուած ինքն է և անհրաժեշտ է զայն ամենայն լրջութեամբ եւ զգաւորութեամբ հասկնալ:

Երբ Տէր Յիսուս կը յայտնէ որ Որդին մարդոյ եկաւ կորսուածը փրկելու անիկայ ամբողջ մարդկութեան վրայ կը նայի եւ զայն Աղամի մէջ տեսնելով Աղամով կորսուած ըլլալը կը յայտարարէ ինչպէս որ Հովհ. 5.18-ին մէջ Պօղոս առաքեալ շատ պարզ կ'ըսէ այս կէտը. «Մէկուն (այսինքն Աղամ) ի յանցանքովը բոլոր մարդոց առաքարտութեան վճիռ եղաւ» եւ նոյնատեւն Տէր Յիսուս իր աշխարհ գալուն բուն նպատակը կը յայտնէ երբեք ըսէ Որդին Մարդոյ եկաւ կորսուածը փրկելու Աղամով կորսուածը. Բրիտանիոյ եկաւ փրկելու փառք Աստուծոյ այս անպատում շնորհքին համար. Ասոր համար Պօղոս առաքեալ կ'ըսէ ուրեմն ինչպէս մէկուն յանցանքովը բոլոր մարդոց առաքարտութեան վճիռ եղաւ. աշխատէ մէկուն այսինքն Բրիտանիոյ Յիսուսի արդարութիւնովը բոլոր մարդոց կեանքի արդարութեան շնորհ եղաւ. վասնզի ինչպէս մէկ մարդուն անհրաժեշտութիւնովը շատերը մեղաւոր եղան, այնպէս Մէկուն հնազանդութիւնովը շատերը արդար պիտի ըլլան», Հովհ. 5. 18-19. Իսկ Երբ. Ժ. Կլուխին մէջ կ'ըսէ Վասնզի նոխազներու ու ցուրերու արիւնը չի կրնար մեղքերը վերցնել:

Անոր համար իր աշխարհ մտնելու ատենը կ'ըսէ. Զոհ ու շնորհ չուղեցիր դուն, հապա ինծի մարմին մը պատրաստեցիր եւ նոյն Կլուխին 10րդ համարին մէջ կ'ըսէ. Մենք ալ սրբուեցանք Յիսուսի մարմնին մէկ անգամ պատրաստուելով: Ո՛հ, Աստուծոյ փառք ըլլայ Յիսուս Բրիտանիոյ եղած փրկութեանը համար: Սիրելի ընթերցող, դուն նորէն ծնած ես, խաչեալ Յիսուս Բրիտանիոյ հաւատալով «Եթէ մէկը Բրիտանիոյ մէջ է, անիկայ նոր ստեղծուած մըն է»: Աստուած քեզ ու՛ր կը տեսնէ. Աղամի թէ Բրիտանիոյ մէջ:

Կ. ՊՅԱՃԵԱՆ

ՀԱՐԻՒՐԱՍԵԱԿԻ ՀԱՆԴԻՍԱԽՈՐՈՒԹԵԱՆՑ

Ա.Ռ.ԹԻԻ
Pasteur Wagner

Սիրելի բարեկամներ,

Այս առթիւ կը փափաքէի պարզապէս արտայայտիչն ըլլալ այն մեծ ուրախութեան և երախտագիտութեան որ մեր սրտերը կը լեցնէ:

Առանց յուզումի չէ՝ որ մենք, մասնաւորապէս Ալզասի **A.C.O.** բարեկամներս հոս հաւաքուած ենք, քանի մը տարուա՛յ տխուր բաժանումէ մը յետո՛յ կատարելու հարիւրամեակը Ձեր բարեկարգութեան:

Ձեզի հետ կը փառաբանենք զԱստուծո՛ւ անդադար, որ մեզ ընտրեց իր գործին համար, և մենք վստահ ենք թէ հաւատարիմ է Այն որ մեզ կանչեց հաղորդ ըլլալու իր Որդւոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսի:

Ու հիմա մեր ակնարկները դարձնենք անցեալէն և ներկայէն, որոնց մասին լսեցինք ու ապագային մասին մտածենք:

Ազգային հայեցակէտով արդեօք մօտաւոր ապագայէն դուք ձեր հայրենիքը պիտի վերադառնա՞ք վայելելով Ձեր կատարեալ ազատութիւնը, կամ պիտի փնտո՞՞ք կեանքի տարբեր պարագաներ աւելի դիւրին տեղերու մէջ, կամ պիտի մնա՞ք մեր հրկրին մէջ, որ ժամանակէ մը ի վեր ձեր հրկրորդ հայրենիքը եղած է: Իսկ ձեր եկեղեցիները արդեօք իրենց խոր հոգեւորութեամբը պիտի շարունակե՞ն ապրիլ դեռ մեկուսացած և մեր ֆրանսական բարեկարգեալ եկեղեցիները պիտի անդիտանա՞ն կամ թէ յաճախակի յարաբերութիւններ պիտի մօտեցնեն երկու քոյր եկեղեցիներ հղբայրական հասկացողութեան մը: Ապագան Տէրոջը կը վերաբերի՝

Հոգ է ահա որ բոլոր անորոշութեանց հոգերուն մէջէն, մեր եկեղեցական գործերուն մասին մեր վստահութիւնը Աստուծոյ վրայ կը դնենք: Վասնզի Աստուծո՛ւ հաւատարիմ է և Անով է որ կը հաշուենք որ Ձեզի պիտի տայ օրական հալը մարմինի և հոգիի:

Բայց եթէ մենք Աստուծո՛ւմով կը հաշուենք, Աստուծո՛ւ ալ մեզմով կը հաշուէ, մեր հաւատարմութիւնով. մեր սիրովը: Ինծի համար ամենամեծ գաղանիքներէն մին է թէ, Աստուծո՛ւ բան մը չընենք, առանց մարդոց գործակցութեան, առանց անոնց լսելուն և հնազանդելուն: Ուրեմն, եթէ

կ'ուզենք օրհնուիլ Իրմէ, պէտք է որ Անոր փառքը ու Անոր հանդէպ մեր հնազանդութիւնը ըլլայ մեր ամենօրեայ հոգը: Պէտք է որ մեր անձնական կեանքը և եղբայրական հասկացողութիւնը մեր հաւատքին շարունակական վկայութիւնը ըլլայ, այն վկայութիւնը որ եկեղեցին պարտական է տալու, իր գլուխին Յիսուսի Քրիստոսի համար:

Վասնզի ինչպէս կը տեսնէք, մինչ ժամը կը լրանայ և հանդէսը իր վերջակէտին կը մօտենայ, մեր հորիզոնները կ'ընդարձակին:

Ալ խնդրոյ առարկայ չեն ֆրանսահայ Աւետ եկեղեցիները: Ձեզի հետ մեր խորհուրդները կ'երթան դէպի այն հայ եղբայրները, որոնք ցրուած են սփիւռքի մէջ, Ամերիկայի, Յունաստանի, Սուրիոյ, Եգիպտոսի և անոնց, որոնք Հայաստան իրենց հայրենիքը կը գտնուին: Կը մըտածենք այն բոլոր եկեղեցիներուն մասին, որոնք կանչուած են լսելի ընել Քրիստոսի աւետարանին ձայնը այս թշուառ աշխարհին մէջ որ մահուան աստիճան վերաւորուած է պատերազմի պատճառաւ:

Ինչպէ՞ս չմտածենք **A.C.O.** ի գործին մասին, որուն հիմնարկութենէն ի վեր մեր աչքերուն նշանակէտ բրած ենք և կը շարունակենք քսան ու չորս տարիներէ ի վեր ի Սուրիա Հայէպի, Հասիէէի կայաններուն մէջ, որոնք դեռ կանգուն կը մնան պատերազմի սաստկաշունչ փոթորիկներէն պրծած: Կը մտաբերենք զանոնք, որ գործին մէջ թաղուած հոս ու հոն հաւատարմօրէն կը կենան իրենց պատնէշին վրայ, օգնելու մասնաւորապէս Սուրիոյ մէջ գտնուած այլ և այլ յարանաւանութեանց ու եկեղեցիներուն՝ որոնք պէտքն ունին արթնութեան մը և գրուն համար կանչուած ենք որպէս գործիքներ: Կը մտաբերենք Իսլամը, որուն առջև չպիտի հրաժարինք ներկայացնել Յիսուս Քրիստոսի փրկութեան Աւետարանը:

Բայց ո՞վ ենք մենք այսպիսի գործի մը զիմացը: Մեր գործութիւնը Աստուծո՛ւմէ է: Սակայն պէտքն ունինք նաեւ այն հաւատարիմ գործակցութեան, որոնք Քրիստոսի կոչն ընդունած են և որոնց միջոցաւ **A.C.O.** կենաց և փրկութեան աւետարանը կը տանի հոգիներու:

Եղբայրներ և քոյրեր, չեմ կարծիք թէ մեր այս եկեղեցւոյ շեմէն ներս մտնելը պատահական բան մըն է: Եթէ պատական ալ է, զիտնալու ենք որ Աստուծո՛ւ մեզ հոս բերաւ ոչ առանց մասնաւոր

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ
ՄԱՐՍԷՅԼԻ ՄԵՋ

Յարեւելանք որ այլ և այլ պատճառներով Յուլիս 30 էն Դեկ. 8 ի յետաձգուեցաւ, կազմակերպուած էր Մարտէլլի, Պամսնի, Ս. Անթուանի Սէն Լուի և Էքս-Կարտանի Հայ Աւետ. Եկեղեցիներու կողմէ, պատուոյ նախապահութեամբ իրենց հովիւ վեր. Ժ. Կ. Պարսումեանի, որ առաջինը եղած է այս գաղութին մէջ Աստուծոյ խօսքը քարոզող:

Մարսիլահայութեան բոլոր խաւերէն ալ եկած էին պատուելիւ համար այս Տօնակատարութիւնը: Հոն էր մարսիլահայ մտաւորականութեան կարեւոր մասը, մասուլի ներկայացուցիչները, և այլն: Եկած էին արուարձաններէն, նոյնիսկ հեռաւոր Էքս և Կարտանէն, մասնակցելու համար այս բացառիկ ուրախութեան:

Փառաքանութեան երգէն և պատ. Կ. Պատաքեանի ընթերցումէն և աղօթքէն յետոյ, բացման խօսքը կատարեց վեր. Յ. Ն. Ղազարոսեան, օրուայ նախագահը և Մարտէլլի հովիւը:

Նպատակի, առանց ձեզմէ պահանջելու որ դուք օգնէք մեզի հաւատքով և սիրով այն գործին՝ որուն մէջ մենք մտած ենք:

«Աստուծոյ շնորհքովն ենք, ինչ որ ենք», կ'ըսենք մենք ալ կատարեալ զիտակցութեամբ և այդ շնորհքը մեր վրայ պարապ չեղաւ:

Տէրը տայ որ այս շնորհքէն օգտուած մենք եւս ըլլանք Աստուծոյ շնորհաց գործիքները, որպէսզի կանչենք ուրիշ հոգիներ փրկութեան, խաղաղութեան և Աստուծոյ որդիներ ըլլալու ուրախութեան:

Է. ՎԱՆԵՂԻ

Pasteur Wagner որ A.C. ©. ի նորընտիր համակրելի նախագահն է, մեր եկեղեցիներէն սիրուած մէկ բարեկամը եղաւ: Այս խօսքերը ուղղուած են որպէս փակման խօսք Բարիդի մէջ սարքուած հարիւրամեակի հանդէսին՝ որ տեղի ունեցաւ Բիւ Մատամ Եկեղեցիին մէջ: Իրմէ առաջ խօսողներն էին Պատ. Սիւլեան և վեր. Ռ. Քիւլէ:

(ԽՄԲ.)

Երգեհոնի վրայ կ'առարուած նուագէ մը յետոյ, հաւատոյ հանգանակը կարդաց Սէնթ-Էթիէնի հովիւ պատ. Գ. Սիւլեան, որ ներկաներու կողմէ ունկնդրուեցաւ յոտնկայս: Մեներգեց Տէսինի հովիւ պատ. Կ. Պարսումեան: Ապա վեր. Մ. Վէթիլեան գրաւոր ճառով մը ամփոփ կերպով ներկայացուց նախադասաւորչեան քրիստոնէութիւնը հայոց մէջ: Երգէ մը յետոյ վեր. Զ. Պուտաքեան պատմականը ըրաւ Աւետ. Եկեղեցւոյ կազմակերպութեան, չեչտելով թէ ոչ միայն, հայ բարեկարգութիւնը, այլ նաեւ 16րդ դարու բարեկարգութիւնը կը պարտինք թոնգրակեցիներուն, որոնք հայեր էին, և էրդ գարուն արդէն նախկարապետները եղած էին բարեկարգութեան:

Երգչախումբը երգեց «Ով կենդանի հաւատք մեր հարց»ը: Ապա՝ Աստուածաբանականի ուսանող Յ. Հէլվաճեան կարդաց զրաւոր ճառ մը. «Աւետարանականութեան բերած հոգեւոր, կրթամշակութային և ընկերային բարիքները ի հայտ» և ջանաց ապացուցանել թէ Հայ Աւետ. Եկեղեցին արժեցուցած է իր գոյութեան իրաւունքը, և թէ ան այսուհետեւ ալ պիտի ջանայ նոյնը ընել արտասահմանի և Հայրենիքի մէջ, քարոզելով Աստուծոյ խօսքը:

Պատ. Կ. Պարսումեանի մեներգէն յետոյ վեր. Ղազարոսեան ամփոփումը ըրաւ այս երեք ճառերուն, եզրակացնելով ըսաւ թէ Աւետ. Եկեղեցին իր գերը ունի կատարելիք հայ իրականութեան մէջ իբրեւ Աստուծոյ խօսքին փողահարը՝ և մեր ազգին հոգեւոր վերելքին սատարող միակ Եկեղեցին:

Մեներգէ մը յետոյ կատարուեցաւ ընդհանուր հանգանակութիւն մը ի նպաստ Աւետարանական Փօնտին:

Վեր. Ժ. Կ. Պարսումեան յորդորեց ներկաները արժանաւոր յաջորդները ըլլալ մեր պապերուն: Իր աղօթքէն յետոյ յոտնկայս երգուեցաւ փառաքանութեան երգը, ապա առաքելական օրհնութիւնով հանդէսը վերջացաւ:

Ժողովուրդը բաժնուեցաւ օրուան ներշնչումով և մեծ գոհունակութեամբ:

Յ. Հ.

ՊԱՐՈՆՔՍ ԺԻՒԼԻԱՆԱ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾ ԱՒԵՏԱՐԱՆՉՈՒՇԻՆ

Պարոնէս Ժիւլիանա Քրուտէնիւր Ռուս Իշխանուհին՝ ծնած է Րիկա, Լէօնիայի մէջ (1764 1824)։ Հայրը Հէրման Փօն Վէթինկհօֆ, Կատարինէ Բ. Զարուհիին պատերազմներուն մէջ իւր հազարապետ համրաւ շահած, Լէօնիա քաղաքին երկու խորհրդականներէն մին՝ մեծահարուստ մարդ մըն էր։ Մայրը, Քօնթէս Աննա Իւլիքա Փօն Միւնիխ, հռչակաւոր գօրապետի մը թոռն էր։ Իշխանուհի Ժիւլիանա, բազմանդամ ընտանիքի մէկ զաւակը, լաւ դաստիարակուած, գերմաներէնի և ֆրանսերէնի քաջածանօթ Օրիսրգ մըն էր։ 18 տարեկան էր երբ ամուսնացաւ պարոն Պոլսնարտ Ալիքսիս Քօնսթանթին Փօն Քրուտէնիւրին հետ, որ իրմէ 16 տարի մեծ էր։

Քրուտէնիւր համբաւաւոր ծանօթ տիպիօմաթ մըն էր, բնութեամբ պաղարիւն և պահպանողական։ Ժիւլիանա ընդհակառակը զօրասէր, դուարճասէր և աշխարհային էր, առաւելապէս շոտայ, դրամ մսխող, ծառաւի գրաւչութեան, այն աստիճան որ յաճախ ինքը և էրիկը դրամապէս նեղութեան կը մատնուէին։

Ժամանակ մը ամէն բան խաղաղ գնաց։ Ամուսնութենէն երկու տարի ետք աղջիկ զաւակ մը ունեցաւ, որուն կնքանայրը եղաւ մեծ Դուքսը Փօլ, որ յետոյ Ռուսիոյ Զարը եղաւ և որուն անունով կոչուեցաւ նորածին երախան։

Նոյն տարիները պարոն Քրուտէնիւր Վինետիկի դեսպան կարգուեցաւ և ետքը Քօփէնհագի։ Սակայն այս պաշտօնի բարձրացումները Ժիւլիանայի գոհացում չէին տար, միշտ դժգոհ էր։

1789 ին աղջիկ զաւակ մըն ալ ունեցաւ, որուն ծննդեան պարագաներուն ինքը շղոյին տկարութեան մը ենթարկուեցաւ և պէտք եղաւ որ երկար տարիներ բժիշկներու թելադրութեամբ իր առողջութեանը համար հարաւու տաք կլիմայի մէջ ապրի։ Իր նորածինին և խորթ աղջկան հետ միասին երկու տարի Բարիդ անցուց, տարի մըն ալ Մօնիէյի, ուրկէ վերադարձաւ Քօփէնհագ, ուր իր էրիկը դեսպան էր և բացօթյա կերպով ըսաւ անոր թէ յետ այսու իր սիրտը այլեւս իրեն չէր կրնար ըլլալ։ Պարոն Քրուտէնիւր, պաղարիւն պահպանողական տիպի-

լօմաթ մը, հակառակ իր կնոջ խօսքերուն, քաղցրութեամբ վերաբերուեցաւ և չուզեց անկէ զատուիլ։ Սակայն ամէն շաաք ի գո՛ւր, Ժուլիանա մերժեց իր էրկանը մօտ Քօփէնհագ մնալը և գնաց դէպի Փէթլըրսպուրկ, ուր իր հայրը ծերակոյտի անդամ եղած էր։ Հոն ալ երկար չը կրցաւ կենալ, անցաւ Պերլին, Լայփցիկ և Զըւիցերիա։

1798 ին Ժիւլիանա կրկին միացաւ իր էրկան երբ ան դեսպան էր Պերլին։ Սակայն Բրուսիոյ անճկուն շրջանակը և դրամական նեղութիւնը զինքը ձանրացուցին։ Այդ ատենները իրենց զաւակին կնքանայրը Զար Փօլ սպաննուեցաւ և անոր կողմնակից պարոն Քրուտէնիւրի դիրքն ալ խախտեցաւ։ Էրկան այս տխուր պարագաներուն կարեկից ըլլալու տեղ, Իշխանուհի Ժիւլիանա պատեհառիթ նկատեց թէ փլիցի բաղնիքները երթալու պատրուակով կրկին զատուիլ իր ամուսինէն, որմէ ետք ալ չտեսաւ զայն։ Իր բաժնուէին մի քանի տարի ետք ամուսինը մեռաւ 1802 ին։

Որքեւարի Պարոնէս Ժիւլիանա տարբեր ուղութեամբ խաղաղութիւն կ'որոնէ։—Քրուտէնիւր ինչ հոգեւ մտ սուր սկաննելու ընկերութեանց։

36 տարեկան էր երբ ամուսինը մեռաւ։

Իր քնքոյշ գեղեցկութիւնը թառամելու վերայ էր, բայց գեղարուեստական խորթակը կարծես նոր կը բացուէր։ Հիմա ալ գրականութեան մէջ համբաւ շահելու ետեւէ եղաւ Շաթօպրիանի և այլ ժամանակին երեւելի գրողներուն հետ բարեկամացաւ և իր կեանքէն մի քանի բօմանթիք գրականութիւններ հրատարակեց։ Եւ սակայն ներքնապէս բնաւ զոհ չէր։

1804 ին իր հայրենիքը Լէօնիա Րիկա, Ռուսիա դարձաւ։ Հոն իր հին բարեկամներէն մէկը երբ զինքը կը բարեւէր, յանկարծ իր ոտքերուն առջեւ ինկաւ ու մեռաւ։ Այդ ցնցումը այնքան խորունկ ազդեց իր արդէն երկմիտ վիճակին վրայ որ նասկսաւ իր ալիկոծեալ կեանքին խաղաղութիւն և մխիթարութիւն փնտռել։ Եւ այդ խաղաղութիւնը գտաւ իր կօշկարին, պարզ և աղքատ մարդուն քարոզութիւններուն մէջ, որ «Մորավեան եղբարց» ջերմեռանդ հաւատացեալներէն մէկն էր։ Թէեւ խաղաղութիւն գտած էր և սակայն խիստ կը տառապէր իր ջղային խանգարումէն։ Բժիշկը կրկին պատուիրեց իրեն Վիգպատէն ջերմուկները երթալ։ Նախախնամ մութիւնը աւելի լուսաւորել կ'ուզէր զայն։

Քօնսպուրկ՝ թագուհի Լուիզի հետ տեսնուեցաւ, ինչպէս նաեւ Ադէմ Միւլլըրի, որ կուպիտ գիւղացի մըն էր, որ սակայն Տէրոջմէ ներշնչուած էր մարգարէական առաքելութիւն մը կատարելու, թագաւոր Ֆրէտէրիք Գ-ի առջեւ:

Այդ ատենները «Հազարամեայ»-ի վարդապետութիւնը բոլոր մթնոլորտը ոլողած էր: Նափուէօն որ մի առ մի Եւրոպայի պետութիւնները կը նուաճէր, Նեոլ կը նկատուէր և վերջին օրերը մօտեցած կ'երեւէին: Ու բարեպաշտական շարժումի (Pietiste) արթնութեան ժողովներու ջանքերով այն հաւատքը ընդարձակօրէն կը տարածուէր թագաւորներու պալատներուն «էջ, աղքատիկ գիւղացիներու խրճիթներուն մէջ, գաւառական եկեղեցիներու ժողովներուն մէջ բոլոր խօսակցութիւնը այդ նիւթին շուրջն էր: «Մարդ մը պիտի գայ «Հիւսիսէն» «Արեւելքէն» Եսայ. ԽԱ. 25. Նեոլ պիտի ջախջախէ .. Բրիտտոս պիտի թագաւորէ հազար տարի երկրի վրայ: Ուտի պէտք է ապաշխարել, պատրաստ ըլլալ գալիք թագաւորը դիմաւորելու, եթէ ոչ կացիներ ծառերուն արմատին քովն է» ...

Այդ, այս վարդապետութիւններուն վրայ իշխանուէր Քրուտէնի իր կրօնական համոզման ուղղութիւնը հաստատուեցաւ: Համոզուեցաւ թէ քարոզութիւնը իր կոչումն է և հետեւեցաւ անոր եռանդով: Իր բոլոր հարստութիւնը, զօրութիւնը ու կեանքը նուիրեց փրկութեան Աւետարանը, խաչիւ Քրիստոսը քարոզելու: Այս կերպով այս կիւնը Եւրոպայի Աւետարանչուհին եղաւ:

Իր ազնուական ծնունդն ու կրթութիւնը, իր բարձր աստիճանները և իր պերճախօս քարոզչները մեծ ազդեցութիւն գործեցին ամէն դասակարգի մարդոց վրայ:

1809ին երբ մաքրակրօնները (Փիէթիսթ) որոշեցին «ընտրեալներ»է գաղութ մը հաստատել Տէրոջմէ գալստեան սպասելու և զԱյն դիմաւորելու, շատ մը խեղճ ու աղքատ գիւղացիներ ալ ծախեցին և ցրուեցին իրենց ունեցածը և Քրուտէնի խումբին հետ գացին Վիրթէմպերկ և հոն հաստատուեցան: Սակայն այս տեղափոխութիւնները և կրօնական շարժումները անհամակիր կառավարութիւններու հաճելի չերեւցան և որպէս յեղափոխական շարժումներ 1811ին խափանուեցան:

Այժմ նոր թափառումներ սկսան դէպի Պատէն, Գարլստուհէ, իշխանուհիներուն «Հազար-

ամեայ»-ի համար ընկերակցութեանց մօտիկը և Ռուսիա, Րիկա, ուր Մատամ Քրուտէնի իր մօրը մահուան անկողնին մօտն էր: Յետոյ ինք ետ դարձաւ Դարլստուհէ ուր նախապէս կուգար զուարճանալու և հոն քաջութեամբ Քրիստոսը քարոզեց: Մատամ Քրուտէնի իր աւետարանչական համբաւը այնքան տարածուեցաւ որ ուր որ երթար, հոն նոր նոր տեսիլքներ կը տեսնէին, մարգարէութիւններ կ'ընէին ինչպէս մեր օրերուն Մուտի-Սանքիի, Պիլի Սընրէի Ճիպի Սմիթի ճամբորդութեանց առթիւ:

1811ին երեւցող Հալէի գլխաւորն ալ փաստ կը նկատուէր գալիք չարագուշակ աղէտներու որոնցմէ պէտք էր փախչիլ և ապաշխարել:

1812ին Քրուտէնի Սթրազպուրկ գնաց, ուր իր հիւրընկալը ապաշխարութեան առաջնորդեց: Ասով իր համբաւը շատ մը տարածուեցաւ:

1813ին ժընէվ էր, ուր բարեպաշտ երկտասարդներ խումբ մը հաստատեց կալվինեան եկեղեցիին խստապահանջ հեղինակութեան գէմ ապստամբելու, (անոնք հաւատացեալներէ Սուրբ երկիր մը հաստատել աշխատած էին և եկեղեցական օրէնքները պաշտպանելու օստիկաններ ունէին):

Ռուսիոյ էլիզապէթ Չարուհին այս ատեն Գարլստուհէ եկած էր: Հոն գտնուող հաւատակից իշխանուհի տիկիններով խորհեցան թէ Չար Ալէքսանդր Ա. Մատամ Քրուտէնի միջոցաւ թիրեւս կրնայ խաղաղութեան, փրկութեան առաջնորդուիլ, թէ և «Հազարամեան» ներու քահանայապետ Եռնկ Սթէլիկի քարոզութիւնը ազդած չէր Չարին վրայ:

Պարօնէս Ժիւլիանա այս նպատակաւ մասնաւոր նամակ մը գրեց Չարին քարտուղարին քով միջոցաւ որ Չարը արտօնութիւն մը շնորհէ մատամ Քրուտէնի իր հետ տեսնուելու, բայց անօգուտ: Չար Ալէքսանդր Ա. այդ ատենները Եւրոպայի ամենամեծ մարդն էր. Նափուէնի յաղթող և զայն ամօթալի նահանջի ստիպող մարդը:

1815ին Ժիւլիանա պատահութիւն ունեցաւ Պատէն երթալ և Շլուսթըրն հաստատուիլ, ուր Վիրթէմպերկի գիւղացիներուն քարոզեց ամէն ինչ ծախել և գալու բարկութենէն փախչիլ: Այդ տեղին մօտերը, Հայլպրոնը պահ մը Չար Ալէք-

ՊԱՏՄԱԿԱՆ ԷՋ ՄԵ

Ձար Ալեքսանտր Ա. ազատասէր կայսեր համբաւն ունի: 1801, 23 Մարտին Ռուսիոյ զահր բարձրացաւ իր հօրը Բօլի տեղ, որ յետագիմական ըլլալուն համար սպաննուած էր ժողովուրդէն: 1777ին, Ալեքսանտրի ծնած ատեն, իր մեծ մայրը Ձարուէի Կատարինէ Բ. զայն իր խնամքին տակ առաւ ու մասնաւոր զաստիարակութիւն տուաւ, եւ 16 տարեկանին ամուսնացուց Պատենի իշխանուհի Լուիզի հետ որ Կատարինէի հայրենակից բողոքական գերմանուհի մըն էր: Կատարինէ իր ամուսնոցն, Ձար Բիթերին սպաննուելէն ետք ինքը տիրացաւ գահին (1763-1793) եւ Ռուսիոյ սահմանները եւ ազդեցութիւնը ընդարձակեց: Լուսաւորեալ բռնակալ մըն էր. շատ մը բարեկարգութիւններ մտցուց: Ձար Ալեքսանտր՝ իր մեծ մօր օրինակին հետեւեցաւ. շարունակեց աւելի բարեկարգութիւններ մտցնել, նոր խորհրդարանական օրէնքներ հաստատեց, սինօթ կազմակերպեց, գիւղացիները — ճորտերը — աւատապետներու հարըստանդ իրեն իբրեւ կեդրոն ըրած էր: Մտած Բրուտէնիւր երբ լսեց, նոյն գիշերը Ձարէն խնդրեց տեսակցութիւն մ' ունենալ իրեն հետ եւ ընդունուեցաւ: Երբ ժիւլիանա ձարին սենեակը մտաւ, գտաւ զայն իր բաց Սուրբ Դրքին առջեւ առանձին եւ խոր մտածութեան մէջ:

Պարօնէն ժիւլիանային յանկարծակի Ձարին սենեակը մտնելը նկատուեցաւ Ձարին ալօթքներուն մէկ պատասխանը: Աւետարանիչ ժիւլիանա երեք ժամ խօսեցաւ անոր իր կարգացած Աւետարանէն, մինչեւ որ Եւրոպայի էն զօրաւոր վեհապետը երեսը ձեռքերուն մէջ ծածկած սկըստաւ լալ, ու վերջապէս խոստովանեցաւ, «Գտայ խաղաղութիւնը որ շատոնց կը փնտռէի»:

Ահա կին մը որ մեծ գործ ունեցաւ այդ բարեպաշտական շարժման ընդհանուր գործին մէջ որ ծնաւ Աստուածաշունչի եւ միսիոնարական ընկերութիւններ եւ աշխուրջ առաջնորդներու ձեռքով խոհուն ուղղութեան մէջ դրուեցաւ:

Անոր Փրկչին համար ունեցած խանդավառ գործունէութեան իրական արդիւնքը Տէրօջը քով գրուած է «Ու որոնք որ շատերը արգարութեան առաջնորդեցին աստղերու պէս պիտի փայլին»:

Նիւ Եորք Վեր. Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

տահարութիւնէն ազատեց, 5,000,000 ռուպլի սահմանելով, եւ ազատուած իւրաքանչիւր ընտանիքին հինգ արտավար հող շնորհեց...

Ռուսիոյ տիրապետութիւնը Անգր-Կովկաս պաշտօնապէս հաստատուեցաւ 1801 Փետր. 16ին:

Հայութիւնը հարստահարութեան երկրին մէջ հազիւ իր շունչը պահած էր մինչեւ իր ազատութեան այն օրը, երբ Ալեքսանտր Ա. բարեխնամ կայսեր Սեպ. 12 թիւ հրովարտակաւ նոր դարաշրջան մը սկսաւ: Այս պատեհութեամբ մեր Վեհ. Կաթողիկոսը Դաւիթ Դ. խնդրեց որ ուսական սահմաններու վրայ փարածուած հայ զաղթականները Էջմիածնի եկեղեցական հեղինակութեան կապով ին եւ իր խնդրանքը շնորհուեցաւ:

Ձար Ալեքսանտր՝ քրիստոնէական, ազատասէր, յառաջգիմական ոգին առաւելապէս ժառանգած էր իր մեծ մօր Կատարինէէն, որ նոյնպէս բարեգութ էր. Ալեքսանտրի քրիստոնէական ոգին ուրիշ ազդակներ ալ կան որ պիտի տեսնենք: Կատարինէ բարեգութ էր ըսինք — Հռլանտայէ, Գերմանիայէ եւ Հուսեան երկիրներէ հալածուած եւ վնասուածները մէնտոնոյթ աւետարանականները Ռուսիա հրաւիրեց 1785 ի տեսնները. անոնց մով երկիրը շէնցնելն ալ ուրիշ նպատակ էր:

Ձար Ալեքսանտր իր գահակալութեան առաջին օրերուն այցելեց եւրոպական երկիրները եւ Անգլիա: Հոն ներկայ գտնուեցաւ Գուէքըրներու կրօնական պաշտամունքին եւս. եւ այնքան ազդուեցաւ անոնց պարզութիւնէն ու անձնական վկայութիւններէն որ զանաք Ռուսիա հրաւիրեց որ երթան եւ քարոզեն Աւետարանը ազատաբար: Ըստ ոմանց՝ ասոնցմէ ծագում առած է Ռուս Մալական բողոքականութիւնը: Որովհետեւ պահք օրերուն կաթ կ'ուտէին՝ Մալական «Կաթ ուտողներ» կոչուեցան:

Սակայն ինքզինքնին կը կոչեն Իսթայնցը «ՈՒՂՂԱՓԱՌ քրիստոնեաներ» եւ Կօստովմէն «Աւետարանականներ»:

Նա պէտք չէր տեսներ զիւսնագիտական յարաբերութիւններ մշակելու պետութիւններու եւ վեհապետներու հետ: Համոզուած էր թէ ամէն թագաւոր անկախաբար ազատ պէտք է ըլլայ գործելու իր երկրին պէտքին համար:

Երբ իր բանակը ետ կը բաշէր ու իշխումին կը յառաջանար եւ Մոսկուայի դռներն հասած էր, Ձարը յուսակաւոր սփոփանքի համար դարձաւ Սբ. Դրքին եւ ալօթքի, որ շատոնց գանց ըրած էր:

Երբ ֆրանսացիներ պնդեցան և Ռուսիոյ սահմաններէն հեռացան, Չարը իր այս տագնապալի օրերու փորձառութիւնը սպալէս կը պատմէ:—Մոսկուայի կրակներուն մէջէն իմ հոգիս լուսաւորուեցաւ, եւ Աստուծոյ դատաստանները իմ սիրտս լեցուցին հաւատքի ջերմ եռանդովը, այնպէս որ, անկէ առաջ բնաւ իմացած չէի:

Անկէ ետքն է որ ես սորվեցայ զԱստուած ճանչնալ, ինչպէս նա յայտնուած է Սբ.Գրոց մէջ:

Անմիջապէս, երբ Անոր կամքը եւ Անոր օրէնքները գիտցայ, որոշեցի իմ անձս եւ կառավարութիւնս ու երկիրս նուիրել Աստուծոյ, Անոր փառքը յառաջ տանելու: Այն ատեն ես եղայ տարբեր մարդ մը:

Ճիշդ այդ ատենները ռուս հաւատացեալները մխիթարելու հասար անգլիական Սբ.Գրքի Ընկերութեան մէկ գործիչը Տօքթ. Փէթըրսըն եկած էր Էտինպուրկէն: Ասիկա բարեկամութիւն հաստատեց իշխան Ալեքսանդր Կալիցինի Ռուսիոյ կրօնից նախարարին հետ և անոր միջոցաւ աղերսագիր մը մատուց Չարին, ներկայացնելով Ս.Գրոց Ընկերութեան Կանոններն ու նպատակը, միեւնոյն ատեն խնդրելով Անկէ, որ արածոն է իրեն Ս. Գրքի Ընկերութեան ճիւղ մը բանալ, առ ի մխիթարութիւն ռուս հպատակներէն ոչ Օրթոտոքս յարանուանութեանց:

1812, 6 Դեկտեմբերին Չարը արտօնեց, աղերսագրին տակ ստորագրելով. «Այնպէս ըլլայ» Ալեքսանտր:

Անմիջապէս Կալիցինի նախագահութեամբ քօմիթէ մը կազմուեցաւ, և 1813 ին Յունուար 11 ին 40ի մօտ հոգիներու ներկայութեամբ հրապարակային ժողով մը եղաւ: Ներկաները կայսրութեան բարձրագոյն անձնաւորութիւններէն էին ու Յունուար 28ին հանգանակութիւն մը բացուեցաւ որուն անմիջական արդիւնքը եղաւ տասը հազար ֆրանք: Չար Ալեքսանդրի վերին հովանաւորութիւնը խնդրուեցաւ, սակայն անիկա իր անունը հասարակ անդամներու ցանկին մէջ արձանագրել հրամայեց 25,000 ռուպլի նուիրելով և տարեկան ալ 10000ի բաժնեվճար մը խոստանալով: Այն ատենուան մեր կաթողիկոսը Էլմիսանի, Եփրեմ կաթողիկոս ալ մասնակցեցաւ այն համագումարին կողիկ գումար մը վճարելով:

Ռուս Ս.Գրոց Ընկերութիւնը այսպիսի ազդեցիկ միջոցներով խաղաղութեամբ յառաջացաւ վեց տարի և 173 մասնաճիւղեր բացաւ եւրոպական Ռուսիայի սահմաններէն դուրս մինչեւ

Կովկաս և Սիպերիա: Չարը հրամայեց Ս.Գրքը թարգմանել ընդհանուր ժողովուրդի հասկըցած լեզուով, որպէսզի սեմինեռներուն, դպրոցներուն, վեղի եկեղեցիներուն, տուններուն մէջ և ամէն տեղ հասկնալի ըլլար ընթերցումը:

Մի քանի տարուան մէջ 800,000 Ս.Գրքեր և Ս.գրական մասեր ցրուցան և ծախուեցան ամբողջ երկրին մէջ:

Ամէն տարի Նիշնի Նովկուրտի վաճառահանգէսի ատեն, Չինաստանէն, շնդկաստանէն, Իրանէն, Թուրքիայէն, Իտալիայէն, Ֆրանսայէն, Դերմանիայէն, և աշխարհի ամէն կողմէն տարեկան վաճառահանգէսին եկող առեւտրականներուն Սուրբ Գրքեր և հոգեւոր տետրակներ կը ցրուըուէր: Ամերիկացի միայն մէկ վաճառական մը մէկ տարին 150,000 հատոր տրամագրեց ցրուելու համար:

Ռուս ժողովուրդը կարդալով Աստուծոյ խօսքը, սկսաւ ուրախութեամբ ողջունել և աղաղակել. «Աւելի հոգեւոր լոյս. Օրթոտոքս եկեղեցիին տուած է աւելի ազդեցիկ առաջնորդութիւն: Պատճառը այս էր որ ժամանակին ռուս թագաւորն քահանաները հասարակ և սղեւտ մարդիկ էին և յաճախ խժոյնէր: Անոնք կը կատարէին քահանայագործութիւնը ոչ հասկնալի լոյսով և ոչ ալ խղճին զոհացում տալով քանզի չիտակ է թէ իրենք մեծամասնութեամբ չէին հասկնար իրենց կարդացածը:

Իշխան Կալիցին՝ Անգլիոյ Ս.Գրոց Ընկերութեան վերին նախագահին Լօրտ Թէկմօնտի գրած նամակին մէջ հետեւեալը կը յիշէր. «Ռուս Ռուս պետութեան, բոլոր նահանգները իրենց ձայնը կը բարձրացնեն մեր ռուս Ս. Գրոց քօմիթէին և կը պաղատին մեզի որ հայրենակիցները և միլիոնաւոր հոգեւոր անօթիները կշտացնենք: Ասոր համար ամէնքն ալ օժանդակել կ'ուզեն մեր Ընկերութեան, նոյնիսկ պարզ գիւղացիներ, որոնք առատապէս կը ստատարեն իրենց նիհար քսակին ներածէն աւելի:—Ահա սրտառու չօրինակ մը:

«Միւնիլոյզ մաքրող գործաւոր մը ներկայացաւ մեր զբառնեակը, տարեկան բաժանորդ արձանագրուելու: Գրասենեակին մէջ ներկաներ զարմացումով նկատեցին որ երիտասարդը 30

ՐՈՒԱԿԻ ԴՐՈՒ ՍԵՂԱՆԻՆ ՎՐԱՅ: ԱՄԻԿԱ ՀԱՄ Է
ՔԵՂԻ, ԸՍՈՒ ԱՌԵՆՆԱՍ ԵՄՐ:

—Ես կը խոստանամ ամէն տարի այդքան տալ պատասխանեց երիտասարդը. սակայն շնորհք մը կը խնդրեմ ընկերութեան նախագահէն, որ պէսզի ինքը թոյլ տայ ինձ Ս. Գրոց մթերանոցը մաքրել ձրիաբար: Ներկանիւրը այնքան ազդուեցան որ շատեր սկսան արտասուել: Խնդրանքը շնորհուեցաւ: Այդ Պայպըլ Հաուզը Զար Աղեքսանդրի կողմէ նուէր եղած մեծ պալատ մըն էր:

Ընկերութեան կազմակերպութենէն քիչ
յետոյ տեսնուեցաւ թէ Հայոց մէջ Աստուածա-
շունչը հապուադիւտ տարր մը եղած էր և շատ
թանկ, այնպէս որ մատչելի չէր նոյնիսկ հա-
րուստ գասակարգէն մարդոց: Առ այս յարմար
տեսուեցաւ տպագրել Հայոց համար Ս.Գիրքը՝
Սահակ Մեսրոպ Սուրբ Թարգմանչաց հինգերորդ
դարու օրինակին վրայ, անմիջապէս: Գործին
սկսուեցաւ երկու տեղիւրու վրայ, Ռուս Ս.Գրոց
ընկերութիւնը Փեթրոկրատի մէջ, իսկ անգլիա-
կան Ս.Գրոց ընկերութիւնը Հնդկաստան կալ-
կաթայի մէջ: 1815ին լոյս տեսաւ ռուսական
տպագրութիւնը 5000 օրինակով:

Անգլիական ընկերութիւնը 2000 օրինակի տպագրութեան համար երկու տարի յատկացուց: Ռուս ընկերութեան եղած ջերմ խնդրանքներուն ընդ առաջ երթալով՝ կրկին 2000 օրինակ Ն. Կոտակարան հրատարակեց գրառար լեզուաւ: Վստահարար Եփրեմ կաթողիկոսի մասնաւոր խնդրանքին վրայ եղած ըլլալու է այդ տպագրութիւնը: Քանզի նախորդ հարստահարութեանց երկիրներուն - Թուրքիոյ և Պարսկաստանի մէջ փճացած էին դպրոցներն և դասադրքերը:

Այդ ասկանները էջմիածնի հրկու թիմերուն մէջ միասին հրկու դարոց գոյութիւն ունէին ինչպէս կը գրէ Լէօ: Իսկ 1814 ին Թիֆլիսի դպրոցին ուսուցիչը ժամկոչ Եղիազար՝ խանութի մը մէջ գրել կարդալ կը սորվեցնէր դաւարի թիւակի վրայ, աճանց, որոնք քահանայանայու միտք ունէին:

U/L bop p

(Վերջ.) Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ՄՈՐ ՄԸ ԱՂՕԹՔԸ ԻՐ ՄԱՆԿԱՆ ՀԱՄԱՐ

Պզտիկ ոտքերէն աղտը կը լուամ:

Ու լուսալոյս կ'աղօթեմ,

Տէր, պահէ զանոնք միշտ մաքուր ուղիղ

Նեղ Ֆամբուն, մէջ քալելու:

Պզտիկ ձեռքերէն աղտը կը լուամ

ԵԼ անձկանօք կ'աղօթեմ

Տէ՛ր Թող անոնք միշտ նուիրուած ըլլան

Ամենէն խոնարհ գործեր ընելու:

Պզտիկ ծուկներէն աղտը կը լուամ

Եւ անդադար կ'աղօթեմ,

Տէր, Թող անոնք միշտ ծալլուին

Քեզմէ հրամաններ եւ յաղթուածիւն ստանալու :

Եւ այնքան շուտ արդիւնոտող հագուստները

Մինչ ևը լուամ' կ'ողոթեմ.

Տէր, Թող զաւակս յաւիտեանս Դարերուն

ՔՈԼ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆՈՒ ԵՄՍԱՎԻԱՅԼ ԲԵՏԵՂԸ ԿԱԳՆԻ:

Գիտեմ թէ շատ ժամեր անցան

Այն պզտիկ ձեռքերը նորէն պիտի լուամ

ԵՆ ՕՐԸ ԻՐԻԿՈՒՆ, չ եղած

Նորէն ապտոտած պիտի ըլլայ հագուստը այն:

Բայց մինչ նա կը համբողջէ կեանքի մէջ

ԵՆ ԿԸ ԱՊՐՎԻ ԳՈՒԼԻ ՈՒ ԱՊՎԻԴԱՐՆ ՂԵԱՍԵՐ

Տէր, անոր Թանկագինն յղատիչ սիրտը

Մաքրուած պահէ ամէն մեղքէ եւ արատէ

Քանզի ջուր եւ օճառ չին կրնար հասնիլ

Հոռի ու լր միայն թուլ աչքի կը տեսնէ.

Ջուրկիս ձեռքերն ու ոտքերը ես կրնամ լուսալ,

քուկդ է գործը սրտին, զայն փեզի կը վստահիմ:

վեր. վ. ՍԱՀԱԿԵԱՆ

2 6 4 0 3 8

Մօտ ատենէն լոյս պիտի տեսնէ

ᐅ ᑲ ᑲ ᑲ ᑲ

Քրիստոնեայ երիտասարդներու ամսաթերթ

ՅԵՂԻՍ ՆՈՅԱԿԱՊ ՎԵՐԵԼՔԸ

Հայն ունեցաւ իր օճախը Արապածի փեշերուն տակ,
 իր օճախը՝ սրախս պէս տաք, եւ կենսախայտ ու անուշ գոլ:
 Հայն ունեցաւ իր հայրենի հորիզոնը խոր ու յստակ.
 Աչքերուս պէս՝ երկինքն անոր առինքնող է և աստղացօլ:

Հայրենիքըս ունի լեռներ Արարատի պէս անմատոյց,
 Բարձունքները՝ սուրբ հանիւս ճակատին պէս շողապըսակ,
 Ժողովուրդը՝ չարքաշ ու վէս, մեղուի պէս ժիր. միահանգոյց,
 Նոր լոյս բերած գանձերն անոր՝ անկըշիւ են, լեռնակուտակ:

Արիւնառուշտ կըրունկներու տակ՝ պնդացած գետինը մեր,
 Այսօր ծով է կանաչութեան, ծով բամպակի ձիւնսպիտակ.
 Դրժոխափայլ կացինի տակ մերկացած վեհ սարերը մեր,
 Հագած են թիւ անտառներու արքայական փառքն անպարփակ:

Կոյր աչքերու նըման փակուած, հին օրհնարեր ակերը մեր՝
 Արեւներու պէս կը ժայթքեն եւ լոյս ու կեանք ու մեղր ու կաթ...
 Եւ անցեալի ջրերն առատ, ցամքած հըզօր մեր ջրվէժներ՝
 Այժմ կը յորդին կենսատարած հոսանքներու պէս ջիւղ արծաթ:

Գացէք, տեսէք ծովածաւալ արտերն զեղուն, հուձքը ոսկի,
 Մօր սրտի պէս՝ հնձաններուն քաղցրութիւնը յորդ ակաղձուն,
 Մեր անցեալին պարծանք եղող ճոխութիւնը պերճ Շիրակի՝
 Խեղճ պատկերն է արդի հսկայ, կուռ եւ յուռթի մեր բերքերուն:

Մենք ունեցանք Ոսկեդարը մեր պատմութեան փառքն ու պսակ,
 Ու դարերով, ու դարերով ալ չունեցանք այդպէս շրջան.
 Սակայն ներկայ արեգնաշող մեր երկիրը ծագէ ի ծագ՝
 Լոյսի, երգի եւ ցնծութեան նոր Եղեմ մ'է անմահական:

Թող ունեգ բացուի հայրենիքիս ձորաբերնի բուրմունքներուն,
 Ականջ՝ տիտան մեր սարերուն հէքեաթ պատմող քամու երգին,
 Աչքեր՝ երկնի դեռ նոր ցաթող գեղանըշոյլ մեր աստղերուն
 Եւ հըրաչեայ նոր սերունդիս պայքարի բուռն ճիգ ու ջանքին:

Ողբի փոխան՝ ճողողիւնով լեցուած է տունն մեր հայրենի,
 Վըրէժերգը՝ տեղի կուտայ եղբայրութեան մարդավայել,
 Փըլատակաց վրայ՝ շէնշող քաղաքներ պերճ եւ գեղանի
 Եւ սողոսկող կեանքէն ազատ՝ ճախրանքն հզօր եւ անարգել:

Ցեղըս՝ այսօր, Հայկի վըսեմ դրօշն ունի ազատութեան,
 Սէգ Արամի՝ կազմակերպեալ զօրութիւնը թարմ, վեհունի,
 Լոյս Արային՝ սրբութիւնը ազգային եւ ընտանեկան,
 Ու պանծալի փառքը վըսեմ անգուգական Մեծն Տիգրանի

Որոնող միտք. կարշնեղ մարմին, նոր սերունդիս հոգին արթուն՝
 Անմահութեան մեծ լոյսերու, մեծ երկունքի մէջ է հիմայ,
 Մատիանը սուրբ, հաւատքն ալ սուրբ մեր մարտիրոս նախնիքներուն՝
 Կը դառնայ նոր մշակոյթին՝ նոր հիմերը կըռանիթեայ:

Արտագրուած «ՅԵՂԻՍ ՉԱՅՆԸ» էԳ

ՍՍՄՈՒԷԼ Պ.

ՇԱՍՊՈՆԻ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Ճրանասահայ Աւետարանական Եկեղեցիներուն Երիտասարդաց երկսեռ բանակումները ուրախացնող ազդակներ եղան Տէրովը գործը սիրողներուն համար:

Սիւմէնի և Շամպոնի բանակումները սկսան Օգոստոսի վախճանին և տեւեցին 15 օր:

Շամպոնի բանակումին ներկայ էին 85 երիտասարդներ և երիտասարդուհիներ 14-21 տարեկան:

Ճրանասայի այս կեդրոնական բարձրավանդակին վրայ ոչ միայն հողեւոր օրհնութիւն վայելեցինք, այլ բնութեան զեղեցիկ մէկ անկիւնին մէջ, անգամ մը եւս ձայնակցեցանք Դաւիթի Երկինք Աստուծոյ փառքը կը պատմէ ու երկինքի հաստատութիւնը՝ անոր ձեռքերուն գործերը կը ցուցնէ՝ ... Սաղմոս 19 1

Արդարեւ գրաւիչ է Շամպոնը իր զեղեցիկ մայրիներով, արագահոտ գետակով, դէպի կապուտակ երկինքը բրդացող լլուրներով:

Առաջին օրէն իսկ ամուր բռնեցինք Տէրովը խոստումը այն յստակ դիտակցութեամբ թէ եկած էինք զայն ընդունելու:

Վեր. Պուտաքեան առաջնորդեց բացման ժողովը:

Օրուայ ընթացքին ունեցանք երկու ժողովներ, առաւօտեան Ս. Գրային դասախօսութիւն մը, իրիկունը՝ աւետարանչական ժողով:

Այս բոլոր ժողովներուն ալ հետեւեցանք մեծ ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ:

Առաջին սերտողութիւնը ըրաւ Վեր. Պուտաքեան և երկու դասախօսութիւններով մեզի ներկայացուց հետաքրքրական նիւթը՝ «Նախախնամութիւնը Եսթերի Դիրքին մէջ»: Պատուելին շեշտեց թէ ինչ օրհնեալ բան է Աստուծոյ առաջնորդութիւնը որովհետեւ Ան կ'իշխէ զէպքերուն և զէմքերուն վրայ և հրաւիրեց ներկաները վստահիլ Անոր:

Հէլվաճեան եղբայր երկու օր շարունակաբար խօսեցաւ «ընկերային օրէնքները Ս. Գրոց մէջ» նիւթին շուրջ որ այժմէականութեամբ հետաքրքրեց ունկնդիրները: Եղբայրը ջանաց ցոյց տալ թէ ինչպէս Ս. Գիրքը՝ այս հին Գիրքը՝ շատ եւ կը թողու արդի ընկերային յառաջդիմութեան ի նպաստ պատրաստուած բոլոր ծրագիրները:

Վեր. Պուտաքեան նիւթ առնելով անգուժ ծառան, ընդգծեց մեր առ Աստուած ունեցած

մեղքի պարտաւորութիւնը: Այդ պարտքը վաճարելու անկարելիութեան առջեւ մեր մեղքերուն թողութիւն գտնելու համար պարտավճար Յիսուսը իբրեւ Փրկիչ ընդունելու անհրաժեշտութիւնը շեշտեց. ծանրացաւ նաեւ իրարու ներելու պարտականութեան վրայ:

Մեզի համար նոր ուրախութիւն մը եղաւ Վեր. Յ. Յակոբեանի ներկայութիւնը: Շատ օգտուեցանք իր քարոզներէն և «ազատութեան» և «թագաւորութեան» մասին իր ըրած շինիչ դասախօսութիւններէն:

Հաճոյքով ունկնդրեցինք Պատ. Սիւլեանի Հայ բարեկարգութեան մասին ըրած դասախօսութիւնը որ պատմական նորութիւն մըն էր երիտասարդութեան համար: Եղբայրը ջանաց ապացուցանել թէ մեր հայրերը նախակարապետները եղած են 16րդ դարու բարեկարգութեան:

Վեր. Պուտաքեան պատմական լուծին վրայ աւելցուց ուրիշ դասախօսութիւն մը՝ «Բարեկարգութեան բերած մշակութային բարիքները հայոց մէջ»: Վերապատուելին ընդգծեց թէ ինչպէս հայ բարեկարգիչները բազմակողմանի բարիքներ բերած են մեր ժողովուրդին, զարդարելով մեր գրական անդամստանը:

Պատ. Սիւլեան խօսեցաւ վերստին ծնունդի մասին և անոր անհրաժեշտութիւնը շեշտեց երկինքի թագաւորութիւնը մտնելու համար:

Դասախօսութիւններէն զատ իրիկուայ աւետարանչական ժողովները օրհնութիւններ բերին մեզի, մեր ակնկալածէն աւելի ուրախացընելով զմեզ:

Առաջին իրիկունը, Վեր. Պուտաքեան խօսեցաւ Աստուծոյ մասին ցոյց տալով թէ որու հետ է մեր —մեղաւորներուս— գործը:

Հէլվաճեան եղբայր, երկրորդ իրիկունը, խօսեցաւ մեղքի ծագումին և անոր հետեւանքներուն մասին:

Վերք. Պուտաքեան և Յակոբեան յաջորդաբար խօսեցան խաչի մասին՝ շեշտելով Աստուծոյ սէրը, Որդւոյն զոհողութիւնը մեզի համար:

Բանակումին ղեկավարը, Պատ Կալվին Պարտումեան, խօսեցաւ քրիստոնէական կեանքի ուրախութիւններու մասին որ հաճաքով ունկնդրուեցաւ բոլորի կողմէ:

Տասը Կոյսերու առակը՝ ներկայացուած Վեր. Պուտաքեանի կողմէ, ազդարարութիւն մը

եղաւ քրիստոնեաներուն ուղղուած պատրաստ
ըլլալու համար Փրկչին երկրորդ Գալատեան:

Վեր. Թրօքմէ — տեղւոյն հովիւը — խօսեցաւ
նիւթ ունենալով՝ Résistance Chrétienne

Այս ժողովներուն հետ մէկտեղ, օրուայ ըն-
թացքին զանազան խաղերով ուրախանալու և
զբօսնելու ժամանակ ալ ունեցանք:

Դաշտագնացութիւն մը կազմակերպուեցաւ
դէպի մօտակայ լեռ մը «Լը Մօն Լիզիեօ» ուրա-
խալի ժամեր անցնելով ընտելեան այս զեղեցիկ
բարձունքին վրայ, երգելով և փառաբանելով
զայն ստեղծող Աստուածը:

Ժողովներու ընթացքին 25ի մօտ տղաք և
աղջիկներ Տէքօլը յանձնուեցան և քրիստոնէա-
կան կեանքի առաջին ուրախութիւններու մա-
սին վկայեցին: Անտարբերութեամբ եկողներ,
Յիսուսի հաւատքը իրենց սրտին մէջ ունենա-
լով մեկնեցան:

Ուրախալի օր մը եղաւ Սեպտեմբեր 8ի
կիրակին: Այդ օրը Շամպօնի ֆրանսական
եկեղեցիին մէջ մօտ 1000 հոգիի ներկայութեան
Պատ. Սիսլեան ֆրանսերէն լեզուով խօսեցաւ
հայ բարեկարգութեան մասին: Երգչախումբը
Պատ. Կ. Պարսումեանի առաջնորդութեամբ եր-
գեց «Տէր ողորմեան» և «Փառաբանութիւն»ը
արցունքներ խլելով ոմանց աչքերէն:

Մեր սրտաբուխ շնորհակալութիւնները
բանակումի ղեկավար Պատ. Կ. Պարսումեանի
որ իր կարելին ըրաւ անոր յաջողութեան համար:

Շնորհակալութիւններ նմանապէս Վեր.
Պուտաքեանի, Յակոբեանի, Պատք. Սիսլեանին
և Հէլվաճեանին, ինչպէս նաեւ Օր. Տիրուհի
Պուտաքեանի որ անձնուիրաբար գործեցին բանա-
կումի ընթացքին, և ըստ անոնց որոնք աղօթ-
քով և ծառայութեամբ նպաստեցին բանակու-
մի յաջողութեան:

Ամէն կողմէ ուրախութեան և գոհունակու-
թեան արձագանդներ կուզան մեզի և վստահ
ենք որ իթէ Տէրը կամի, զալ տարիաւելի բազ-
մաթիւ պիտի ըլլանք:

Ֆրանսահայ աւետարանական եկեղեցւոյ
Երիտասարդներու միութեան սեփական բանա-
կատեղի մը ունենալը անհրաժեշտութիւն մըն
է: Աղօթենք նաեւ անոնց համար որ բանակու-
մի ընթացքին իրեն յանձնուեցան, որպէսզի
Տէրը հաւատարիմ պահէ զիրենք:

Փառքը և պատիւը յաւիտեանս յաւիտենից
մեր սիրելի Փրկչին Յիսուս Քրիստոսի ըլլայ:

ՄԱՐԻ ԶԱՐԻՖԵԱՆ

ՃԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՎԵՐ. ՄԱՐԿՈՍ ՎԷՔԻԼԵԱՆԻ

Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիներու Միու-
թեան ժողովին առթիւ Պատ. Մ. Վէքիլեանի
ձեռնադրութիւնը տեղի ունեցաւ 24 Յուլիս
Չորեքշաբթի երեկոյեան ժամը 8ին, 15 Րիւ
Կրկնեան, ֆրանսական եկեղեցիին մէջ, 1000
հոգիի բազմութեան մը ներկայութեան:

Բացումը կատարեց Վեր. Բիւշ: Բաց-
ման աղօթքը ըրաւ միութեան նախագահը՝
Վեր. Գ. Սայրկեան:

Առաջին խօսուղը եղաւ M. Wagner, A.C.O-ի
նոր նախագահը: Վեր. Wagner իր ուրախութիւ-
նը ու շնորհակալութիւնը յայտնեց առաջին
առթիւ Հայ Աւետ. եկեղեցիներու հետ շփման
գալուն առթիւ, և հոգեւոր պաշտօնէութեան
պարտականութեանց մասին խոր պատգամ մը
բերաւ: Չեռնադրող և կարգեցէջ հովիւը՝ Վեր.
Կ. Պարսումեան, իբրեւ բնաբան առաւ Պողոս
առաքեալի խօսքը Տիմոթէոսի ուղղուած, «Բեզի-
յանձնուած աւանդը պահէ» և շեշտեց Ս. Հոգի-
ով այդ աւանդը պահելու անհրաժեշտութեան
մասին: Չեռնադրութեան խոստումները ընդու-
նեցին Վեր. Berron ֆրանսերէն, իսկ Վեր. Յ. Ն.
Ղազարոսեան հայերէն:

Հասաւ ձեռնադրութեան յուզիչ բոլակն և
հաւ 15 ձեռքեր բարձրացան ծնկաչոք խոնար-
հած մեր սիրելի եղբօր գլխուն վրայ: Աղօթ-
քը արտասանեցին Վեր. Տօքթ. Պէռոն ֆրան-
սերէն լեզուով և Վեր. Յ. Ն. Ղազարոսեան հա-
յերէն, որմէ յետոյ ձեռնադրող հայ և ֆրանսա-
ցի 15 հովիւները ողջագուրեցին եղբայրը:

Ապա խօսք առաւ Վեր. Մ. Վէքիլեան:

Վերապատուելին նախ իր շնորհակալու-
թիւնները յայտնեց պատկան մարմիններուն
ի մասնաւորի A.C.O. ի Տնօրէն Dr. Berron-ին,
ինչպէս նաեւ M. Cuche-ին որ տրամադրած էր
իր ընդարձակ եկեղեցին: Վեր. Վէքիլեան հա-
կիրճ կերպով տուաւ իր վկայութիւնը և Աս-
տուծոյ էութեան և պաշտօնէութեան վերաբեր-
եալ իր լոյսերը:

Մարտէլի երգչախումբի երգէն յետոյ մի-
ներգեց Կալվին եղբայր Պարսումեան:

Ընդհանրական երգերը, հայերէն և ֆրան-
սերէն, միաատեղ երգուեցան ժողովուրդին կողմէ:

Վերջին աղօթքը ըրաւ Վեր. Cuche:
փոռաբանութեան աղօթքէն յետոյ ձեռնադրու-
թեան օրհնեալ արարողութիւնը վերջացաւ:

Յ. Հէլվաճեան





